Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ. 2 հիմնական

Թեմա՝ Օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը տարբերակված ուսուցում իրականացնելիս

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Անահիտ Խուդավերդյան

Սիսիան - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ 5
1.1 «ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ», «ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 5
1.2 ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐԸ» 8
1.3 ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ 9
ԳԼՈՒԽ 2. ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 13
2.1 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13
2.2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից կրթական բարեփոխումների՝ համընդհանուր ներառական կրթության ներդրման պայմաններում, հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում, բոլոր մյուս երեխաների հետ միասին սովորելու հնարավորություն է ընձեռնվում սահմանափակ կարողություններով երեխաներին: Կրթության ոլորտում այսպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է կրթության մատչելիություն և հավասար հնարավորություններ բոլորի համար: Այդուհանդերձ, տարբերակված ուսուցումը, կրթության մատչելիությունը, հավասար հնարավորությունները, միջավայրային հարմարեցումը դեռևս չեն կարող հանդիսանալ լիարժեք սոցիալական ներառման երաշխիք, քանի որ բոլորի հետ և բոլորի կողքին սովորում են ոչ միայն սահմանափակ կարողություններով երեխաներ, այլ նաև «չբացահայտված» օժտվածություն ունեցող երեխաներ: Օժտվածություն ունեցող երեխաները, չկարողանալով ներկայացնել իրենց «յուրահատուկ» լինելը, այդպես էլ մնում են կամ ստվերում, կամ համարվում «բարդ» երեխաներ: Այդ նպատակով կարևորվում է մանկավարժի կոմպետենտությունը, տարբերակված ուսուցումը և մանկավարժական դիագնոստիկայի ընթացքում անհրաժեշտ մեթոդների և մեթոդիկաների կիրառումը օժտվածություն ունեցող երեխաների բացահայտման, լիարժեք սոցիալականացման ու սոցիալական հարմարեցման համար:

Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը տարբերակված ուսուցում իրականացնելիս և ներկայացնել առաջարկություններ արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությունը,

- Ուսումնասիրել և բացահայտել դասապրոցեսում օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպմանն ուղղված մանկավարժի կողմից կիրառվող մեթոդները:
- Առանձնացնել օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման վրա ազդող գործոնները տարբերակված ուսուցում իրականացնելիս:

Հետազոտության մեթոդները՝

Մասնագիտական գրականության վերլուծության, դիտման և պրոյեկտիվ մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1.

ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

1.1 «ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ», «ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Օժտվածություն (одаренность) մարդու բնածին առանձնահատկությունների ամբողջություն, որը նախադրյալ է հանդիսանում ընդանուկությունների զարգաման համար: Տարբերում են ընդհանուր օժտվածություն (որպես անձի բանականության ընդհանուր զարգացման նախադրյալ) և մասնավոր օժտվածություն (հատուկ՝ մաթեմատիկական, երաժշտական և այլ ընդունակությունների զարգացման նախադրյալները): Առանձնացնում են նաև արտակարգ օժտվածություն հասկացությունը, որի առկայությունը նախապայման է հանդիսանում տաղանդի և հանճարի զարգացման համար: Համապատասխան սոցիալական պայմանների և գործունեության բացակայության պայմանների դեպքում օժտվածություն չի դրսևորվում և ընդունակությունների զարգացման չի հանգեցնում:[1]

Օժտվածությունը դիտարկվում է հոգեկանի համակարգային զարգացում, որն ընթանում է ողջ կյանքի ընթացքում: Օժտվածությունը անձի կարողությունների զարգացվածության բարձր մակարդակն է այս կամ այն գործունեության ոլորտում: Առանձնացնում են օժտվածությունը հետևյալ բնագավառների.

- Սոցիալական, այլ կերպ ասած՝ առաջնորդային,
- Գեղարվեստական՝ երաժշտական, պատկերավոր մտածողությամբ, բեմական
- Հոգեշարժողական՝ ընդգծելով բացառիկ մարզական կարողությունները,

[1]Նալչաջյան Ա.Ա., «Հոգեբանական բառարան», «Լույս» հրատարակչություն, Երևան-1984, էջ 211

- Ակադեմիական՝ ուսման նկատմամբ բացառիկ հետաքրքրվածությունը,
- Ինտելեկտուալ՝ մտածողական, վերլուծական, փաստերը համադրելու, համապատասխանեցնելու բացառիկ կարողություն: Ընտանիքում և դպրոցում այս երեխաները գերազանցիկներ են: Սակայն կան դեպքեր, որ որոշ ինտելեկտուալ երեխաներ գերազանց են միայն մեկ կամ երկու առարկաներից, իսկ մյուսները չեն հասցնում:
- Ստեղծագործական՝ ոչ ստանդարտ մտածողությամբ: Հիմնականում այս երեխաները չեն կարողանում հասնել իրենց նպատակներին և համարվում են անհաջողակներ: Նրանք բոլորին նյարդայնացնում են: Շատ կարևոր է նրանց ժամանակին բացահայտել և օգնել նրանց:[2]

Համաձայն մեկ այլ սահմանման՝ օժտվածությունը «ասինխրոն զարգացում» է, որում զարգացած ճանաչողական ընդունակությունները և բարձր ինտենսիվությունը միավորվում են, որպեսզի ստեղծեն ներքին փորձ և գիտակցում, ինչը որակապես տարբերվում է նորմայից: Այսպես, ասինխրոնությունը մեծանում է բարձր ինտելեկտուալ ընդունակություններով պայմանավորված: Օժտվածների յուրօրինակությունը նրանց խոցելի է դարձնում և պահանջում է դաստիարակության ոճի, ուսուցման փոփոխություն, խորհրդատվություն թե՛ երեխային, թե՛ ծնողին, որպեսզի հնարավոր լինի ապահովել բարենպաստ զարգացում:

Օժտվածության սահմանման վրա իրենց ազդեցությունն են ունեցել տարբեր դպրոցներ: Բինե-Սիմոնի դպրոցը թերություն էր տեսնում Վունդտի դպրոցի մոտեցումներում, ովքեր օժտվածությունը դիտում էին առավելապես ինտելեկտուալ ոլորտի դրսևորում: Այդ ժամանակաշրջանում լայն տարածում է ստանում Ալֆրեդ Բինիեի և Թեոդոր Սիմոնի համահեղինակությամբ ստեղծված ինտելեկտուալ պոտենցիալի ախտորոշման համակարգը, որը պատմականորեն հիմք է դնում IQ (ինտելեկտի գործակից) հասկացությանը:

[2]Василькова Ю.В., «Методика и опыт работы социального педагога», ≪Академия≫, 2001, ст 122

Անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կարլ Գուստավ Յունգը գրում է՝ «Օժտվածությունը միայն բացառիկ դեպքերում է դրսևորվում համաչափ զարգացման մեջ, հաճախ այն հակադրությունների լայն միջակայք է, որը ներքին կոնֆլիկտների և լարվածության աղբյուր է դառնում: Օժտված մարդը կենսաբանական տեսանկյունից շեղվում է միջինից, և, չնայած բարձր ընդունակությունները մարդկության ծառի ամենագեղեցիկ, սակայն հաճախ վտանգավոր պտուղներից են՝ կախված են բարակ ճյուղերից, որոնք հեշտությամբ կարող են պոկել»:[3]

[3]Մաղլենա Առաքելյան, «օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա», Երևան 2017, էջ 8:

1.2 ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐԸ»

Տխուր ճակատագիր է սպասվում նրան, ով տաղանդավոր է, բայց սեփական ընդունակությունները զարգացնելու և կատարելագործելու փոխարեն չափազանց մեծամտանում է և տրվում անգործությանն ու ինքնահիացմունքին: Այդպիսի մարդն աստիճանաբար կորցնում է մտքի պարզությունն ու սրությունը, դառնում է ներտ, ծույլ և ծածկվում մարմինն ու հոգին քայքայող տգիտության ժանգով:

Լեոնարդո Դա Վինչի

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված հայեցակարգի համաձայն՝ օժտված երեխաները ևս համարվում են «ռիսկի խմբի» երեխաներ՝ մտավոր հետամնացություն, շեղվող վարք դրսևորող, սահմանափակ կարողություններ ունեցողների կողքին:[4]



[4]https://www.who.int/ru

1.3 ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Եթե անգամ թռչունը վանդակում է,

բնավ չի նշանակում,

թե նա չի կարող թռչել:

Ժյուլ Ռենար

Ֆրանսիացի գրող (XIX-XXդդ)

Մանկավարժական մտածողությունը դինամիկ է, ճկուն և կառուցվում է մանկավարժական հասկացությունների, գաղափարների, մանկավարաժական գործունեության վերաբերյալ պատկերացումների, գիտելիքների համակարգի տրամաբանության համատեքստում: Մանկավարժի կողմից ցուցաբերվող միօրինակ, կարծրատիպային գործունեությունը հանգեցնում է մանկավարժական գործընթացի արդյունավետության նվազմանը: Միայն մանկավարժական կոմպետենտության արդյունքում է հնարավոր ունենալ ցանկալի արդյունք: Մանկավարժական կոմպետենտության բաղադրիչներ են հանդիսանում՝

- Հոգեբանա-մանկավարժական կոմպետենտությունը,
- Հաղորդակցական կոմպետենտությունը,
- Հետազոտական կոմպետենտությունը՝
  - Վերլուծական
  - Դիագնոստիկ
  - Ձևավորող
- Կառավարչական կոմպետենությունը:

Մանկավարժական դիագնոստիկան առաջին կարևորագույն քայլն է երեխաների հետ աշխատանքում, երեխաների օժտվածության, հատուկ կարիքների բացահայտման գործընթացում: Մանկավարժական խնդիրների նկատմամբ մանկավարժի

դիագնոստիկ-հետազոտական մտածելակերպի առանձնահատկություններով է պայմանավորված գործընթացի հաջողությունը։

2016 թ-ից սկսած՝ կրթական համակարգում ներդրվեց համընդհանուր ներառական կրթության ծրագիրը, որը հանրակրթության զարգացման գործընթաց է։ Այն ենթադրում է կրթության մատչելիություն և հավասար հնարավորություններ բոլորի համար։ Գործընթացը հանրակրթական դպրոցում սովորելու այցեքարտ է ընձեռում առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին՝ բացառելով ցանկացած խտրականություն երեխաների նկատմամբ։ Կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները առավել են ընդգծում մանկավարժի մանկավարժական դիագնոստիկայի՝ որպես մասնագիտական կոմպետենցիայի կարևորությունը տարբերակված ուսուցում իրականացնելիս։ Ուշադրության կենտրոնում են հայտնվում սահմանափակ հնարավորություններ ունեցող, շեղվող վարք դրսևորող, մանկավարժական բարձիթողությամբ, մանկավարժական կոլեկտիվի կողմից «դժվար» որակված, թափառաշրջիկ, դեզադապտացված երեխաները և դեռահասները, սակայն հաճախ վերը նշված շարքից դուրս են մնում օժտվածություն ունեցող, «բացառիկ» երեխաները, ում ևս անհրաժեշտ է բացահայտել և տարբերակված մոտեցում ցուցաբերել։

Համընդհանուր ներառական կրթությունը, կոչված լինելով երեխայի կարողություններին համարժեք գիտելիքների ապահովմանը, ֆիզիկական միջավայրի հարմարեցմանը, կրթության գործընթացում երեխայի ակտիվ մասնակցության խրախուսմանը, կրթության համար հավասար հնարավորություններ ստեղծելուն, այնուամենայնիվ, տեսադաշտից դուրս է թողնում ռիսկի խումբ համարվող օժտված երեխաներին։ Ինչպես Յունգն է նշում երեխաների օժտվածության մասին *«...Նույնիսկ կարելի է ասել՝ աստվածային հրեշ է, որում ոչ միայն ոչինչ չկա դաստիարակելու, այլև, ընդհակառակը, դրանից պետք է պաշտպանել երեխային...»*

Լերա Հոլիգուրտը անդրադառնալով օժտված երեխաների հիմնախնդիրներին՝ առանձնացնում է դպրոցի նկատմամբ բացասական վերաբերմունքը, որը պայմանա-

վորված է ուսումնական ծրագրերի ձանձրալիությամբ:[5] Եվ որպեսզի բարձրացնել երեխաների վերաբերմունքը դպրոցի, դասապրոցեսի և կրթության նկատմամբ, անհրաժեշտ է իրականացնել տարբերակված, անհատական մոտեցում:

Օժտված երեխաները, ունենալով բարձր ինտելեկտ, ևս համալիր և ընդգրկուն աջակցության կարիք ունեն: Ուսումնական գործընթացում կարևորվում է մանկավարժի կողմից դիագնոստիկայի և տարբերակված ուսուցման իրականացումը, որի արդյունքում հնարավոր կլինի.

- Երեխայի ակնհայտ և քողարկված օժտվածության բացահայտում,
- Ուսումնական գործընթացի օպտիմալացում,
- Անհատական մոտեցում կրթության և դաստիարակության տեսանկյունից,
- Հաղորդակցական հմտությունների, ստեղծագործական մտքի զարգացմանն ուղղված խմբային աշխատանքների կազմակերպում,
- Օժտվածության (բացառիկության) պահպանում,
- Հարմարեցում և ինտեգրում,
- Խորհրդատվական աշխատանք թե՛ երեխայի, թե՛ ծնողների հետ,
- Կրթության համար մեթոդների և մեթոդիկաների ընտրություն և համապատասխանեցում:

Հատկանշական է, որ համընդհանուր ներառական կրթության պայմաններում կարևորվում է՝

- ❖ յուրաքանչյուր սովորողի անհատականության ընդգծումը,
- ❖ երևույթների միջև եղած պատճառահետևանքային կապերի համալիր և ընդգրկուն ուսումնասիրությունը,
- ❖ խնդրի զարգացման դինամիկան,
- ❖ սովորողի անձի տարիքային զարգացման առանձնահատկությունները,
- ❖ վարքային փոփոխությունները,
- ❖ ներանձնային և միջանձնային փոխհարաբերությունները,

[5] http://kantegh.asj-oa.am/998/1/171-176.pdf

- ընտրված կրթական մեթոդիկաները և չափորոշիչները,
- սոցիալ-տնտեսական իրավիճակները,
- ֆիզիկական միջավայրի հարմարեցումը,
- սովորողի առողջական վիճակը և առանձնահատկություններին՝ անկախ սովորողի առաջադիմությունից։

ԳԼՈՒԽ2.

ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օժտվածություն ունեցող երեխաների հետ իրականացվող տարբերակված ուսուցման արդյունավետության ուսումնասիրության նպատակով ընտրվել են դիտման և պրոյեկտիվ մեթոդները:

Դիտման մեթոդը հետազոտության հնագույն մեթոդն է, որի օգնությամբ կարելի է անձի մասին լայն տեղեկություններ ստանալ: Այն անփոխարինելի է այնտեղ, որտեղ մշակված չեն ստանդարտացված ընթացակարգեր: Դիտման մեթոդը չափազանց մեծ նշանակություն ունի երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար:[6]

Պրոյեկտիվ մեթոդները առանձնանում են մի շարք կարևոր առանձնահատկություններով: Բոլորը ներառում են անորոշ կամ չկառուցվածքավորված թեստային ազդակներ: Հետազոտողը երբեք չի հաղորդում փորձարկվողին թեստավորման իրական նպատակների մասին՝ չնշելով նաև պատասխանների մեկնաբանման առանձնահատկությունները: Հրահանգներում ընդգծվում է, որ ճիշտ կամ սխալ պատասխաններ այստեղ չեն կարող լինել, և փորձարկվողն իրավունք ունի պատասխանել այնպես, ինչպես ցանկանում է:[7]

[6] https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4

[7] https://hy.wikipedia.org/wiki/

Հետազոտական աշխատանքն իրականացվել է Սիսիանի հ.2 հիմնական դպրոցի 6 «բ» դասարանում: Հետազոտությանը մասնակցել են 32 աշակերտներ:

2.2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտության դասաժամերին կատարվել են բազմաթիվ երաժշտական վարժություններ, կազմակերպվել են երաժշտական ստեղծագործությունների՝ դասական, հանրամատչելի ունկնդրումներ, կատարվել է վերլուծություն: Դիտման ընթացքում 32 սովորողներից 22-ը ակտիվորեն ներգրավվել են դասաժամերին և կարողացել են կատարել վերլուծություններ ինքնուրույն, իսկ մյուս 10-ը՝ ուսուցչի հուշմամբ կամ օգնությամբ:

Սովորողների ստեղծագործական և երաժշտական օժտվածությունը բացահայտելու և նրանց հետ տարբերակված անհատական արդյունավետ ուսուցում կազմակերպելու նպատակով երաժշտության դասաժամին սովորողները բարձրաձայն կարդացել են Գևորգ Էմինի «Ա՜խ, այս Մասիսը» բանաստեղծությունը, ապա հանձնարարվել է տրված առաջադրանքներից կատարել որևէ մեկը.

- Հորինել «Ա՜խ, այս Մասիսը» բանաստեղծության համար երաժշտություն, երգել այն:
- Երգել «Ա՜խ, այս Մասիսը» բանաստեղծությունը հնչած երաժշտության միջոցով:
- Երգել «Ա՜խ, այս Մասիսը» բանաստեղծությունը երեխաներին ծանոթ երաժշտության միջոցով:
- «Ա՜խ, այս Մասիսը» բանաստեղծության սյուժեի շուրջ նկար նկարել:
- Գունալցնել նկարը (առանձնահատուկ պայմանների (ծանր, խորը) կարիքներ ունեցող երեխաների համար):

Սովորողները ազատ են եղել իրենց ընտրության հարցում: Տրվել է 10-15 րոպե պատրաստվելու համար:

Սովորողներից 10-ը, ովքեր ունեն երաժշտական բարձր տվյալներ, դիտման ժամանակ ցուցաբերել են ակտիվություն և կատարել ինքնուրույն դատողություններ և վերլուծություն, ընտրել են առաջին հանձնարարությունը, սակայն հաջողությամբ կատարել են 7-ը: Մյուս 3-ը հաջողությամբ կարողացան կատարել 2-րդ հանձնարարությունը:

Սովորողներից 12-ը ընտրել են 2-րդ հանձնարարությունը, որը հաջողությամբ կատարել են:

Սովորողներից 7-ը ընտրել են 3-րդ հանձնարարությունը: 7-ն երեխա էլ կարողացան կատարել բանաստեղծությունն իրենց նախընտրած երաժշտության միջոցով, նրանցից 1-ը նաև ընտրեց 4-րդ հանձնարարությունը և հաջողությամբ կատարեց այն:

Սովորողներից 3-ը, ովքեր սիրում են նկարել, ընտրել են 4-րդ հանձնարարությունը և բնապատկերը:

Այս մեթոդի կիրառությունը նպաստում է դասերի արդյունավետ պլանավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ համընդհանուր ներառական կրթության պայմաններում տարբերակված ուսուցումը, մանկավարժական տարբեր մեթոդների կիրառումը հնարավորություն են տալիս մանկավարժին դասապրոցեսը կազմակերպել լիարժեք՝ ի նպաստ յուրաքանչյուր աշակերտի անհատական մաքսիմալ զարգացման: Բոլոր աշակերտները ներգրավվում են դասապրոցեսի մեջ՝ելնելով.

- ✓ անհատական առանձնահատկություններից,
- ✓ գիտելիքից ու կարողություններից,
- ✓ ընդունակություններից,
- ✓ անհատական զարգացման հնարավորություններից,
- ✓ հետաքրքրություններից և այլն:

Այսպիսով՝ մանկավարժական դիագնոստիկան՝ որպես հետազոտական գործընթացի կարևորագույն բաղադրիչ, տարբերակված ուսուցումը՝ որպես կրթական գործընթացի կազմակերպման միջոց, էական ազդեցություն են ունենում երեխաների (հատկապես օժտվածություն ունեցող) հետ տարվող կրթական և դաստիարակչական աշխատանքների ճիշտ պլանավորման, երեխաների «թաքնված» օժտվածության բացահայտման, դրա պահպանման և զարգացման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մաղլենա Առաքելյան, «Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա», Երևան 2017, էջ 8:

2. Նալչաջյան Ա.Ա., «Հոգեբանական բառարան», «Լույս» հրատարակչություն, Երևան-1984, էջ 211

3. Василькова Ю.В., «Методика и опыт работы социального педагога», ≪Академия≫, 2001, ст 122

4. https://www.who.int/ru

5. http://kantegh.asj-oa.am/998/1/171-176.pdf

6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4

7. https://hy.wikipedia.org/wiki/